

ամարը ՀՕ-35-Ն Տեսակը Մայր

Տիպը Օրենք Կարգավիճակը Գործում է

Սկզբնաղբյուրը ՀՀՊՏ 2009.01.26/5(671) Հոդ.102 Ընդունման վայրը Երևան

Ընդունող մարմինը ՀՀ Ազգային ժողով Ընդունման ամսաթիվը 26.12.2008

Ստորագրող մարմինը ՀՀ Նախագահ Ստորագրման ամսաթիվը 20.01.2009

Վավերացնող մարմինը Վավերացման ամսաթիվը

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 05.02.2009 Ուժը կորցնելու ամսաթիվը

Կատարել է փոփոխություններ հետևյալ

փաստաթղթերում՝ Յուրաքանչյուր փոփոխվողին

համապատասխանող ինկորպորացիան՝

ԱԺ, 19.11.2002, ՀՕ-519-Ն ԱԺ, 19.11.2002, ՀՕ-519-Ն

ՀՀ Օրենքի «ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ Օրենքով ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հնդուևված է 2008 թվականի դեկտեմբերի 26-ին

«ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական կենսաթուղթերի մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի նոյեմբերի 19-ի ՀՕ-519-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 7-րդ հոդվածի 3-րդ կետը ուժը կորցրած հանաչել:

Հոդված 2. Օրենքի 15-րդ հոդվածի տեխսը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Յուրաքանչյուր անձ 35 տարվա ապահովագրական ստաժի առկայության դեպքում կենսաթուղթի անցնելու իրավունք ունի սույն օրենքի 12-րդ հոդվածով սահմանված տարիքից մեկ տարի շուտ, եթե չի աշխատում: Կենսաթուղթ նշանակելուց հետո աշխատելու դեպքում կենսաթուղթ վճարելը դադարեցվում է մինչև անձի տարիքային կենսաթուղթի իրավունք տվող տարիքի լրանալը:»:

Հոդված 3. Օրենքի 26-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 3-րդ կետից հանել «գավակները,» բառը.

2) 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ կետով.

«4) 18 տարեկան և դրանից բարձր տարիքի հաճմանդամ գավակները, եթե նրանք հաճմանդամ են հանաչվել մինչև իրենց 18 տարին լրանալը և չեն աշխատում:»:

Հոդված 4. Օրենքի 8-րդ գլխի վերնագրից հանել «Աշխատանքի հատուկ պայմաններում աշխատելու և» բառերը:

Հոդված 5. Օրենքի 37-րդ հոդվածում`

1) վերնագրից հանել «Առանձնապես վնասակար, առանձնապես ծանր, վնասակար, ծանր պայմաններում աշխատելու և» բառերը.

2) 3-րդ մասի երկրորդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Մասնագիտական ապահովագրական ստաժում հաշվառվում են մինչև սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված ցանկերը Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանելը հիմնական աշխատավայրում աշխատած ժամանակահատվածները, համատեղությամբ աշխատած ժամանակահատվածը մասնագիտական ապահովագրական ստաժում չի հաշվառվում:»:

Հոդված 6. Օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի «հինգ» բառը փոխարինել «յոթ» բառով:

Հոդված 7. Օրենքի 45-րդ հոդվածում՝

1) 3-րդ մասը ուժը կորցրած հանաչել:

2) 5-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 9-րդ կետով.

«9) ուսումնական հաստատություններում առկա (ցերեկային) ուսման ժամանակահատվածը, սակայն վեց տարուց ոչ ավելի:»:

3) 5-րդ մասի երկրորդ պարբերության «1-8-րդ» թվերը փոխարինել «1-9-րդ» թվերով.

4) 6-րդ մասը ուժը կորցրած հանաչել:

Հոդված 8. Օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը ուժը կորցրած հանաչել:

Հոդված 9. Օրենքի 52-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Սույն օրենքով սահմանված տարիքային կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու դեպքում արտոնյալ պայմաններով, երկարամյա ծառայության կամ մասնակի կենսաթոշակի փոխարեն, անկախ կենսաթոշակառուի դիմելուց, նշանակվում է տարիքային կենսաթոշակ, իսկ հաշմանդամության կենսաթոշակ կամ կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակ ստանալու կամ այդ իրավունքը ձեռք բերելու դեպքում կենսաթոշակի տեսակը փոխվում է կենսաթոշակառուի գրավոր դիմումի համաձայն: Եթե նշանակված տարիքային կենսաթոշակի չափը ցածր է նախկին կենսաթոշակի չափից, ապա կենսաթոշակը վճարվում է նախկին չափով:»:

2) 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Սույն հոդվածով նախատեսված դեպքերում կենսաթոշակի տեսակը փոխելիս կենսաթոշակի գործում առկա փաստաթղթերով մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված ստաժը հաշվառվում է նույնությամբ:»:

Հոդված 10. Օրենքի 54-րդ հոդվածը «չափով» բառից հետո լրացնել «, բացառությամբ սույն օրենքի 15-րդ հոդվածով նախատեսված դեպքի» բառերով:

Հոդված 11. Օրենքի 55-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի «հաջորդ ամսվա ընթացքում» բառերը փոխարինել «մինչև տվյալ ամսվա 20-ը» բառերով.

2) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Սույն օրենքով նշանակված կենսաթոշակների վճարումն իրականացնում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության Օրենքով սահմանված կարգով ընտրված կազմակերպությունը կամ կենսաթոշակառուի ընտրությամբ՝ վճարման ծառայություն մատուցող այլ կազմակերպություն:»:

Հոդված 12. Օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասի «վեց» բառը փոխարինել «տասներկու» բառով:

Հոդված 13. Օրենքի 60-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 1-ին և 3-րդ մասի 1-ին կետերը ուժը կորցրած հանաչել.

2) 2-րդ մասի 2-րդ կետից հանել «անձամբ» բառը, իսկ 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5) սույն օրենքի 15-րդ հոդվածով սահմանված կարգով կենսաթոշակ նշանակելուց հետո կենսաթոշակառուի աշխատելու դեպքում:»:

3) 4-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ կետով.

«4) սույն օրենքի 15-րդ հոդվածով սահմանված կարգով կենսաթոշակ նշանակված լինելու դեպքում՝ անձի տարիքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքի լրանալու ամսին հաջորդող ամսվա 1-ից:»:

4) 4-րդ մասի երկրորդ պարբերությունից հանել «, եթե այդ կենսաթոշակի վճարումը դադարեցնելու Օրվանից անցել է տասը տարուց ոչ ավելի ժամանակահատված» բառերը:

Հոդված 14. Օրենքի 61-րդ հոդվածը և 73-րդ հոդվածի 2-րդ մասը ուժը կորցրած հանաչել:

Հոդված 15. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 73.1-րդ հոդվածով.

«Հոդված 73.1. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը նշանակված կենսաթոշակը վերահսկվողները համար լրացուցիչ վաստադրոշմներ ներկայացնելու դեպքում կենսաթոշակը վերահսկվողներին է սույն Օրենքով սահմանված կարգով և համարվում է նոր նշանակում: Այս դեպքում կենսաթոշակի գործում առկա՝ Օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված ստաժում առանձնապես ծանր, առանձնապես վնասակար պայմաններում աշխատած ժամանակահատվածը, քաղաքացիական ավիացիայի աշխատողների՝ քիչաչափ ժամերով հաշվարկված ժամկետները, վկայությամբ հաստատված ժամանակահատվածը, երեխաների խնամքի ժամանակահատվածը, ուսումնական հաստատություններում առկա (ցերեկային) ուսման ժամանակահատվածն ապահովագրական ստաժի մեջ պահպանվում են նույնությամբ:

Սույն օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի և սույն հոդվածի 1-ին մասի դրույթները տարածվում են սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո վերահսկվողներին կենսաթոշակների վրա՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:»:

Հոդված 16. Սույն օրենքի ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության

Նախագահ Ս. Սարգսյան

2009 թ. հունվարի 20

Երևան

ՀՕ-35-Ն